

« Նոր պատիւ մը՝ ընծայումս Ռուսցւ. Տեղայի:

Ռափա Պաշտօնեային մէկ հեռագիրը, որ այսօր հասաւ (Բատուայի) Համալսարանի Տեսչին, կ'իմացնէ թէ (Խաւիոյ) Թագաւորը՝ Լիւիլոյ Տեղա Ռուսցչապետը անուանած է Հրամանատար Մալրիսեան կարգին: Ռուսցչ. Տեղա որ մեր Արեւելոյ մէջ այնքան պատիւ կ'ընէ իբր սանակրիտի և դասական լեզուաց համեմատական պատմութեան դասատու, վեհեղեցի է, եթանասուն և հինգ տարեկան է, և գիտական աշխարհին մէջ կը վայելէ ստուգիւ տիեզերական համբաւ մը՝ իր ամենընդարձակ հմտութեան համար. զրեթէ հարիւր լեզու գիտէ, կենդանի և մեռեալ:

» Նոր պատիւը ուրեմն պարտաւորեալ յարգանք մ'է հռչակաւոր Ռուսցչապետին »:

Բազմապէս, հայ ազգին կողմանէ իր ուրախակցութիւնները կ'ուղարկէ յարգելի գիտնականին, որ կը շարունակէ, անծեռանալի աշխուժով, նուիրական յիշատակներ ծանօթացնել Եւրոպայի, և երբեմն, նոյն իսկ Հայոց:

ԽՍՐ.

## « Հ Ա Յ Ր Մ Ե Ր » Ի

Կ Ի Ա Մ Փ Ո Փ Ո Ռ Ո Թ Ի Ն Ե Ն Ի Բ

• « Հայրմեր » ին պատմութիւնը կը սկսի Քրիստոսի մահուընէն առաջ: Ամենօրեայ սովորական աղօթք մ'էր քրիստոնէից քով, երբ մուտ գտաւ ամենէն հին գրական աղբիւրներուն մէջ՝ որ են Աւետարաններն: Անկէ վերջ երկայն ժամանակ Հայրմերին գործածուած ձեւերը՝ լատ. Եկեղեցւոյ պատարագամատուցին և աւետարանչաց գործերուն մէջ՝ միշտ փոխադարձաբար իրարու վրայ ազդեցութիւն ունեցան և այսու կրեցին ինչ ինչ փոփոխութիւններ:

Այս փոփոխութեանց նշանաւորները կը գտնուին Ղուկասու և Մատթէոսի ամենահին ձեռագիր աւետարանաց մէջ անգամ: Այժմեան մեր գործածածներուն մէջ իսկ ըստ բաւականի նուազ նշմարելի են, և պատճառն՝ օրինակողներն եղեր են որ դարերու ընթացքին մէջ՝ Ղուկասու Հայրմերը նմանցուցեր են իրենց գործածած Հայրմերին, որ էր Մատթ. աւետարանչինը, որ և ներկայիս արեւմտեան եկեղեցւոյն մէջ արարողական գործածութեան մէջ մտեր է:

## ՀՆԱԳՈՑՆ ՁԵՒԸ

Ղուկասու աւետարանին ուսմանին ձեռագրաց Հայրմերն է, « Հայր, սուրբ եղիցի անուն քո, եկեացէ արքայութիւն քո, զհաց մեր հանապազորդ տուր մեզ զօրըստօրէն. թող մեզ զմեզս մեր զի և մեք թողումք ամենայնի որ պարտիցի մեզ և մի տանիր զմեզ ի փորձութիւն »:

Ասոր մէջ կը պակսին « Մեր, որ յերկինս » բառերը. յետ « Հայր » կողականին նաեւ « եղիցի կամք քո որպէս յերկինս և յերկրի » և « Այլ փրկեա ի չառէ » երկու պարբերութիւնները:

Հայրմերի այս երկու ձեւերն ալ հին քրիստոնէից արարողական գործածութեանց մէջ տեղի ունեցեր են հաւանօրէն, բայց մին միւսէն աւելի առաջ: Արարողութեան մէջ ընդհանրապէս հաստատուն կանոն մը եղեր է, որ հասարակաց նուիրական ձեւ մը կրնայ հասնիլ մեզ քիչ մը փոփոխուած՝ տարիներու ընթացքով, բայց միշտ նոր յաւելումներով և ոչ երբէք յապաւումար կամ ուրիշ փոփոխութեամբ մը: Քրիստոնէից սրբազան կարծած բառերը կարելի չէր յապաւել և կամ մեծ փոփոխութեան ենթարկել, մինչդեռ հազուագիւտ չէր արդէն նուիրական դարձած ծիսից ձեւերն ընդլայնել:

Ռուրեմ կրնանք հետեցնել թէ Ղուկասու Հայրմերը կը գործածէին քրիստոնեայ Մատթէոսի աւետարանին գրուելէն շատ տարիներ առաջ: Հայրմերին այս երկու ձեւերը կը ցուցնեն որ այս աղօթք-

քը կը գործածուէր առաքելական դարու սկիզբն և վերջը: Յիսուսնէն վաթսուն տա-  
րուան միջոց ծիսական մեծ փոփոխու-  
թիւն կրած են երկուքն ալ:

#### ՊԱՅՃԱՌՔ ՅԱՒԵԼՈՒԹԱԾՆԵՐՈՒ

Պարզ «Հայր» կոչումը Յիսուսի բերանը  
դրուած՝ հին ջրիստոնեայք յարմար չդա-  
տեցան: Արարողական գործածութեան և  
հրէական պաշտաման հակառակ էր: Ուս-  
տի փորձեր եղան և յաջողեցան ընդ-  
հանրացնելու «Հայր մեր որ յերկինս ես՝»  
որուն իմաստը ստէպ կրկնուած է Մատ-  
թէոսի Աւետարանին մէջ և երկու անգամ  
ալ Ղուկասու մէջ բաց ի տէրունական ա-  
ղօթքէն, որ և Հրէից սովորական աղօթից  
մէջ ալ բաւական յաճախեալ էր:

«Եղիցին կամք քո» պարբերութիւնն  
առնուած է Յիսուսի Գեթսեմանիին մէջ ը-  
րած աղօթքէն: Աւելի դժուար է որոշել  
«Որպէս յերկրի» ին ծագումը. վասն զի  
ոչ մի ապացոյց ունինք որ հաստատէ թէ  
Յիսուս ըսած ըլլայ աղօթքի մը կամ խօ-  
սակցութեան մը մէջ:

«Այլ փրկեա զմեզ ի չարէ» այս յա-  
ւելուածը չէ կարելի հետազօտել Յիսուսի  
ուրիշ խօսքերուն մէջ: Հին ատենէն եղեր

է և հիմակ ալ մինչեւ կէտ մը՝ միայն պա-  
տասխան է աղօթքիս, բայց ոչ ամբողջա-  
ցուցիչ: Հատին պատարագամատուցին մէջ  
քահանայն բնաւ չի կրկնեւ, այլ ժողո-  
վուրդը կամ երգիչները:

Այս յաւելուածին պատճառն եղաւ աս-  
տուածաբանական դժուարութիւնը կից հե-  
տեւեալ բառերու մեկնութեան «Մի տա-  
նիր զմեզ ի փորձութիւն», որ և պատ-  
ճառ եղան կարծելու թէ Աստուած ինքն  
կ'ուզէ զմարդ փորձութեան մէջ ձգել. մինչ  
Մատթէոսի աւետարանի Արամեբէն նախ-  
նական բնագրին մէջ «տանել» թոյլ տալ  
կը նշանակէ:

«Ձի քո է արքայութիւն և զօրութիւն  
և փառք՝ յաւիտեանս ամէն» . Յոյն՝ և  
Հայ աւետարանաց մէջ կը գտնուի. Լա-  
տինին մէջ կը պակսի. Եղիշէ Հայրմերի  
մեկնութեան մէջ բնաւ չի յիշատակեր  
զայս. իսկ Միսիթար Արք. «ասէ աղօ-  
թողն» . կը դնէ:

S.

1. Ոսկան և Լատ. — Դ դարու և ուրիշ ձեռագիրք,

Բագր. և Զրեւայք «որ յերկինս ես» ըլ լուսին:

2. Հմմ. Ա. Տնաց. Իթ. 11.

3. Ոսկեր. Մկն. Մթ. էջ 314.

4. Թարգմանաբար The Contemp. Rev. Թերթէն.

#### ՎԻԿՏՈՐ ՀԻԿՈՑ

#### ՊԻԻՐԿՐԱՎՆԵՐ



(Նախընթացը տես էջ 523)

Ամենամեծ ապշուքիւն. մոռացկանիկ շրջակայ իրադրութիւնն  
եւս աւելի քովէն կը հեռանայ: Կայսրն, որ միշտ երկայն սրիկ  
կոթնած է, սպասակաւ ժանտ երևոյժ տապալկայ իշխաններուն  
կը նայի:

Կայսրն. — Դուք ի վաղուց կայսրն գիտէք որ շատ անգամ ձեր ձորէն  
Ան ցանկելով անցաւ, ահա այն ահաւորն նորէն  
Երեւոյս, աւուրն ուսկից կը ստկայիք, վատ գայլեր.  
Կայսրն փրկիչ որ Ոթնի բարեպաշտին մեծ կայսեր  
Գերմանիան, պայծառ զըշխոյն, վեհ հրեւոյսն՝ որ ի վաղուց  
Մեռած՝ Թաղած՝ նա մանաւանդ թէ մոռցուած էր՝ յարուց